



Յարեկան գինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարուստներից սպասեմք օգնութիւն թէ հասարակութիւնից. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարոյականութեան անկման նշաններ. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բուժքննարկի կառավարութիւնը և դիմադրականները. Սարգսիւնի ներկայացրած յիշատակագիրը. Իշխան Բիսմարկի հրաժարականը. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՆՆԵՐ. — ԲՕՐՄԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՑ ՍՊԱՍԵՆՔ ՕԳՆՈՒԹԻՒՆ Թէ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՅՑ

Մարդկային հասարակութեան կեանքի մէջ երկու սկզբունքներ կան, որոնք կարող են հերթով մին միւսի տեղը բռնել, որոնք քանի առաջ է գնում, զարգանում է հասարակութիւնը, միմեանց մէջ աւելի և աւելի մրցում են: Այդ երկու սկզբունքներից առաջինը՝ անձնական գործունէութեան, երկրորդը՝ հասարակական գործունէութեան սկզբունքն է: Կարող եմք և ուրիշ անուն տալ այդ սկզբունքներին. առաջին սկզբունքը կանոնանքն է, անհատական, իսկ երկրորդը՝ ընկերական, կամ հաւաքական:

Քաղաքակրթական կողմից անդադրացած հասարակութիւնների մէջ առաջին սկզբունքն է տիրապետում ամեն բան, ամեն տեսակ գործը, ամեն տեսակ նախաձեռնութիւն կամ ինքնիշխանութիւն սպասում են առանձին անհատներից և ոչ թէ հասարակութեան հաւաքական ոյժերից: Քանի հասարակութիւնը հաւաքական ոյժերից է, քաղաքակրթութիւնը, այնքան հաւաքական, ընկերական պրինցիպը աւելի և աւելի է բռնում անհատական ինքնիշխանութիւնը: Առաջին պրինցիպը անբաժան է բարեգործութեան և զաւարճարկից, երկրորդը՝ հիմնական է հասարակութեան ինքնագործունէութեան, ինքնօգնութեան գաղափարի վրա: Մարդկային զարգացման առաջին փուլի մէջ, երբ հասարակութիւնը ինքն անգործ է մնում և ամեն բան սպասում է անհատների օգնութիւնից, հասարակական գիտակցութիւնը, ինքնաձանաչութիւնը դեռ ևս թույլ կերպով է զարգացած: Քանի հասարակութիւնը աւելի և աւելի է զարգանում թէ մտաւորապէս և թէ բարոյապէս, աւելի է քաղաքակրթվում, այնքան իր սեփական ընկերական, հաւաքական ոյժերի վերաբերմամբ աւելի գիտակցութիւն է ստանում, աւելի է յոյս դնում իր սեփական ոյժերի վրա և աւելի գիտակցաբար դիմում է ինքնագործունէութեան, ինքնօգնութեան պրինցիպին, երկրորդական բան համարելով անհատական կողմից օգնութիւն սպասելը իր անհրաժեշտ պահանջներին:

Բերենք օրինակներ: Սկսենք ընտանիքից. մի ամբողջ ընտանիք, որ բաղկացած է հօրից, մորից, հասակ առած որդիներից և աղջիկներից՝ սպասում, պահպանվում է միմիայն հօր աշխատանքով: Բացի հօրից ընտանիքի մնացած անդամները ոչ մին փող չէ աշխատում: Այդ տեսակ ընտանիք կառավարվում է անհատական սկզբունքով: Բայց այժմ թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում ընտանիքը հետզհետեւ դառնում է մի կազմակերպված ընկերակցութիւն, որի բոլոր անդամները մի մի մասնագիտութիւն ունեն և ամեն մէկը նրանցից աշխատում է, փող է վաստակում և վաստակածը տուն բերում: Եղբայրսով ընտանիքը պահպանվում է ընկերական սկզբունքով և ոչ թէ անհատական սկզբունքով:

Մի գործարանի բանուորներ ստանում են իրանց օրական վարձը, որ հազիւ բաւականացնում է իրանց և իրանց ընտանիքի մարդկային սպասարկմանը: Այդ սուղ նիւթական միջոցներից աւելին նրանք սպասում են գործարանատիրոջ, կապիտալիստի

օգնութիւնից, նրա բարեգործութիւնից: Շատ գովելի է, եթէ կապիտալիստը իր սեփական միջոցներով հիմնում է իր բանուորների համար բնակարաններ, հիւանդանոց, հաստատում է թօշակի արկը, նրանց երեխաների համար դպրոց և այլն: Բայց այդ բոլորը կախված է գործարանատիրոջ բարի կամքից, այդ բոլորը հիմնված է բարեգործութեան, անհատական սկզբունքի վրա, այդ բոլորը պատահական է... Սակայն բանուորների շրջանում փոքր առ փոքր զարգանում է ինքնագործունէութեան, ինքնօգնութեան գիտակցական սկզբունքը: Եւ ահա բանուորների մէջ հաստատվում է ընկերակցութեան գաղափարը. նրանք հասկանում են, որ անհատի բարի կամքից, նրա բարեգործութիւնից, նրա մարդասիրական զգացմունքից օգնութիւն սպասելը անհաստատ բան է: Եւ ահա բանուորների ընկերակցութիւնը հիմնում է իր սեփական ինստիտուցիոն արկը, թօշակի արկը, սպասման, վերջապէս և արդիւնաբերութեան ընկերութիւն... Գրքը առ փոքր անհատական սկզբունքի տեղը, որ հիմնված է բարեգործութեան վրա, բռնում է ընկերական սկզբունքը, որ հիմնված է ինքնօգնութեան վրա:

Ընկերական սկզբունքի վրա հիմնված են ամեն տեսակ առեւտրական ձեռնարկութիւններ, ակցիոներական ընկերութիւններ, արդիւնաբերական ձեռնարկութիւններ, բարեգործական հաստատութիւններ, գիտնական ընկերութիւններ և այլն: Ընկերական սկզբունքի վրա կարող է հիմնված լինել և մամուլը, եթէ լրագիրը անձնական օրգանն է, այլ մի կուսակցութեան, մի ամբողջ հասարակութեան գիտակցական օրգանն է:

Եթէ աւելի հեռու գնանք մեր դատողութիւնների մէջ, կը համոզվենք, որ համայնական ինքնավարութիւնը (ինչ անուն է կրի նա՝ քաղաքային ինքնավարութիւն, կամ մունիցիպալիտէտ, գէմնութի, նահանգական ինքնավարութիւն, կամ կանտոն), նմանապէս հիմնված է ընկերական սկզբունքի վրա, այդ բառի լայն, ընդարձակ նշանակութեամբ: Աւելի էլ լայն, ընդարձակ ընկերական սկզբունքի վրա հիմնված է և նոյն իսկ պետութիւնը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ հարկատու ոյժերի մի հաւաքական գիտակցական ընկերակցութիւն:

Մշակի՛ւ անցեալ 38-որդ համարի առաջնորդողը մենք վերջացրինք Յարցնելով թէ անձնական, անհատական բարեգործական սկզբունքի տեղը ի՞նչ սկզբունք կարող է բռնել, և այժմ կը պատասխանենք, որ անձնական սկզբունքի տեղը կարող է և պէտք է բռնել ընկերական գիտակցական սկզբունքը, բարեգործութեան սկզբունքը պէտք է հետզհետեւ փոխարինել ինքնօգնութեան սկզբունքով:

Մեզ դուցէ՛ կառարկեն թէ հայերը պատրաստ չեն ինքնօգնութեան սկզբունքը իրագործելու, ուրեմն դուր է քարոզել նրանց այդ սկզբունքի իրագործումը: Բայց մի՞թէ չը պէտք է քարոզել մի արդար սկզբունք, որ իրագործվում է ամեն տեղ, միայն այն պատճառով, որ այս րօպէիս մեզ մօտ հասարակութիւնը դեռ չէ հաստատացել այդ սկզբունքը իրականացնելու:

Թողնենք այն, որ նիւթական օգնութիւն ստանալը անազնիւ միջոցներով հարստացած մարդկանց ձեռքից՝ անբարոյական է, բայց զիտաւորապէս հասկանանք այն, որ անհատների արած բարեգործութիւնը մի պատահական, անհաստատ երևոյթ է. այդ տեսակ բարեգործութիւնը կախված է բարեգործութիւն անողի բարի կամքից, այն ինչ հասարակական ընկերական գործունէութիւնը մի հաստատ, տեղական բան է: Բարեգործութիւնը կախված է ուրիշից, կախված է նրա բարի կամքից, իսկ ինքնօգնութիւնը կախված է մեզանից:

Անհերքելի է, մի և նոյն ժամանակ և

անգործնական է, երբ որ ամբողջ հասարակութիւնը ինքն ոչինչ չէ անում, անգործ է մնում, և սպասում է, որ մի գուցէ հարուստներից մին կը յայտնվի և կը նուիրէ այս կամ այն հասարակաց հաստատութեան օգտին մի խոշոր գումար: Անձնական բարեգործութիւն թող լինի, նա միշտ լինում է ամեն երկրներում և միշտ էլ կը լինի, ուրեմն լինելու է և մեզ մօտ, քանի որ նա լինում է և Շվեյցարիյի ու Ամերիկայի պէս ինքնաձանաչութեան վերին աստիճանի հասած երկրներում էլ, որոնց մէջ ինքնագործունէութեան և ինքնօգնութեան սկզբունքը կատարելութեան է հասցրած, բայց ամեն բան սպասել բարեգործութիւնից, առանց հաստատապէս ձեռնամուխ լինելու ինքնօգնութեան սկզբունքին՝ դա և անհերքելի է, և անգործնական է:

Մենք ունենք մեր սեփական եկեղեցի, մեր բարեգործական ու մարդասիրական ընկերութիւնները, մեր թեմական ու ծրարական դպրոցները, մեր հրատարակչական ընկերութիւնը, մեր մամուլը, մեր թատրոնը և այլն, — այդ բոլոր հաստատութիւնները կարող ենք համարել համար սպասում ենք անձնական բարեգործութեան սկզբունքից թղթած նուիրատուութիւնների:

Մի՞թէ մի միլիօն հոգուց բաղկացած Անդրկովկասեան հայոց ազգաբնակչութիւնը չէ կարող իր այդ բոլոր հաստատութիւնները ինքն իր սեփական նիւթական միջոցներով փառաւոր կերպով պահպանել, հիմնելով ընկերակցական սկզբունքի, ինքնագործունէութեան և ինքնօգնութեան անսխալ թելի և գիտակցական սկզբունքի վրա, առանց ակնկալութիւն ունենալու միմիայն անձնական բարեգործութիւնից:

Իսկ եթէ, ի միջի այլոց, և բարեգործութիւն կը լինի, — թող լինի, փոյթ չէ: Բայց դրա վրա չը պէտք է հիմնել հասարակութիւնը, որ բոլոր յոյսերը, ինքն անգործ մնալով իր սեփական ոյժերի վրա չը վստահանալով և ամեն բան սպասելով անհատական օգնութիւնից:

Քանի մարդկային հասարակութիւնը աւելի է զարգանում, քաղաքակրթութիւնը, նա այնքան աւելի պէտք է ամեն տեսակ օգնութիւն իր սեփական ոյժերից սպասի, և ոչ թէ հարուստ անհատներից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Անցեալ ամառ, երբ ես և իմ ընկերս մտադրեցանք Երևանին մօտիկ գտնված Աշտարակ և իր շրջակայ մի քանի գիւղերը պտտել, ամենից շատ հետաքրքիր եղանք մանրամասն տեղեկութիւններ ժողովելու ժողովրդեան բարբ ու վարբի, նրանց բարոյականութեան մասին: Որքան մենք կարողացանք հաստատ աղբիւրներից տեղեկանալ, այդ տեղերում հետզհետեւ բարոյականութիւն ընկնում է և սրան ապացոյց հազարաւոր փաստեր էին բերում: Որինակ՝ այնտեղ սովորական բան էր այդի կարատել, ծառեր կտտորել, այս կամ այն մարդու տունը կտրել-կողոպտել և այլն. հէնց մեր Աշտարակում եղած ժամանակ ականատես եղանք 3—4 գողութեան: Այս դէպքերը ցոյց են տալիս, որ այնտեղ կատարվում է բարոյական անկում և որովհետեւ Աշտարակը, որպէս կենտրոն, իր շրջակայ գիւղերի վրա մեծ ազդեցութիւն ունի, ուստի վերջիններս էլ սկսել են նոյն օրինակին հետեւել — աղբիւրներ կտտորել, գողութիւն անել, զուլճ շարժել, բերանից անուր հայհոյանքներ թափել և այլն:

Մենք այս բոլորը տեսնելով ու լսելով, ցաւում էինք, որ մեր ժողովուրդը Երևանի անմիջական ազդեցութեան տակ այսպէս փչացած է: Այժմ

տեսնենք թէ իզդրել ի՞նչ դրութեան մէջ է բարոյական տեսակէտից:

Իզդրելում երևում են նշաններ, որ կարծես սպառնում են մեզ ապագայում գողերի, աւազակների և այլ անբարոյական մարդկանց լեզգօն ներ պարգևելու: Մեր ասածը հաստատելու համար մէջ կը բերենք մի երկու դէպք: — Անցեալ աշնան վերջերում մի պարոն Ն. ազգանունով ցորեն է տանում ջրաղաց. երեկոյան մի քանի անյայտ մարդիկ յարձակվում են ջրաղացի վրա ավերի տուպակները յափշտակելու դիտաւորութեամբ, բայց չէ աշդովում: Տաւն օր առաջ Ղ. ազգանունով մի պարոնի եղբայրը վախճանվել էր և նրան պէտք է թաղէին ամսիս 19-ին: Թաղման նախընթաց օրը — այն է ամսիս 18—19 երեկոյան մեռելատէրերը պատրաստութիւն են տեսնում հօգոյ հաց տալու. շատ կաթնասներ, սկուտներ դրված են լինում բակի մէջ. հանգուցեալի մօտաւոր ազգականները — կանայք, աղջիկներ ժողոված են լինում սպաւորների միջի թաղերում: Ինչ ասել կուզի, որ նրանցից շատերը իրանց ունեցած ոսկեղէն կամ արծաթեղէն զարդերից վերցրած կը լինէին իրանց հետ:

Սգաւորների խառնաշփոթ դրութիւնից մի քանի ջահիլներ (չը կարծեք 16—17 տարեկան...) մտածում են օգտվել, այսինքն՝ յարձակվել, կողոպտել ու փախչել: Գիշերվայ 1 թէ 2-ին նրանք սկսում են իրանց գործունէութիւնը, բայց բարեբաղդաբար տանեցիք իմանում են ու փախցնում են գողերին:

Չը յիշելով մանր-մունր գողութիւնները, այս դէպքերն էլ հերիք էին ցոյց տալու, որ արդէն երևում են անբարոյականութեան մէջ ընկնելու հակումները:

Բացի այս կան էլի ուրիշ պատճառներ, որոնք, կարելի է դրական կերպով ասել, հիմք և սկզբնապատճառ են բարոյականութեան անկման: Անցնում ես փողոցով, հասարակ թէ կիրակի օր մի և նոյն է, տեսնում ես 7—8 տեղ թէ արհեստաւոր և թէ վաճառական բան ու գործները թողած, իրանց խանութի դռան առաջ նստած թուղթ են խաղում: ամեն մի խաղատեղում խմելում են մօտ 10 մարդ. նրանցից երկու երեքն են խաղացող, միւսները հանդիսատես են. խաղացողները հասակաւոր, դաւանների տէր մարդիկ, ընտանիքի հայր են... Խաղը լինում է 2 շիշ գինու կամ մի «տրիդցակով» օդի վրա ճարվեց մէկը, իսկոյն մտնում են զինետուն, մի լաւ խմում ու դուրս գալիս քիթները կարմրացած: Մէկ խումբը վերջացրեց, միւսն է սկսում խաղալ, դարձեալ նոյն նպատակով: Հասկանալի է թէ տարվող բերանից ինչ անպատկառ խօսքեր, ինչ անուր հայհոյանքներ կը թափվեն և այս բոլորը լինում է փողերի, 13—16 տարեկան զաւակների առաջ: Ինչ կը սովորեն որդիք իրանց հայրերից, եթէ ոչ այն, ինչ նրանցից լսում կամ տեսնում են:

Նշաններ կան Քանիցս մենք անգործ պատանիներին բռնելով հեռացրել ենք եկեղեցու բակից, որոնք եկած, գերեզմանաքարերի վրա նստած ժամերով թուղթ խաղալիս են եղել: Զանիցս ականատես ենք եղել առօրէ պատանիների պարագութեան մէջ ընկղմված...:

Մենք ականատես ենք եղել, այն էլ ոչ մի անգամ, փողերի 4—6 տարեկան ամուսնների լկտի արարմանց, որոնց լրագրութեան էջերում պատաւար էլ յիշել:

Ընթերցողը կարող է այս փաստերիցս եզրաւորել թէ ապագայում որպիսի աղէտ է սպասում մեր ժողովրդին, ուր զիմում է ինքը աչքերը դոցած, անգիտակցաբար:

Ամեն մի քիչ թէ շատ հասկացողի համար ակնհայտ է դարձել, որ զաւակի ամենամեծ վարժապետը նրա ընտանիքն ու շրջանն է: Իսկ մանկան շրջանը տեսած թէ ինչ վիճակի մէջ է: Բայց ընտանիքի և ընտանիք կառավարող անհատների վրա ո՞վ կարող է ազդել: Չարքը, — ոչ, որովհետեւ տեղացի հասակաւորը ոտք չէ կոխում դպրոց:

Լրագրութիւնը,—հ. որովհետեւ ամբողջ լրագիրը չէ կարողում Սակայն կայ մէկը, որ անմիջական ազդեցութիւն ունի ընտանիքի վրա և շատ բան կարող է անել, այդ քանանան է։ Այո, նա կարող է ազդել ընտանիքի, ծնողների շրջանի վրա, որովհետեւ միշտ առիթ ունի նրանց հետ շփուելու։ Բայց ով է տուել մեղաւորին արքայութիւն... մենք (փակագծի մէջ պէտք է աւելացնենք, բոլոր հայերը) չունենք այդպիսի արժանաւոր և ազդեցութեան տէր քանաններ։ Դեռ չէ դադարել այն հարցը, որ մի քանի շաբաթ առաջ վերաբարձարվեց, ամեն կողմից քանանայ են պահանջում, ամեն կողմից կանչում են բանիբուն լինի օժիւածը և հէնց նոյն պահանջող մարդիկ իրանք ստորագրում են որ և է տիրացուի քանանայութեան թղթին։ Մի և նոյն է և՛ այստեղ և՛ ամեն տեղ։

Ամենալաւ ժամանակը բարոյներով ժողովուրդը մոլար ճանապարհից դարձնելու, այս մեծ-պատի ապաշխարութեան օրերն են, թողնե՛ք դեռ միւս ժամանակները, երբ ահալին բազմութիւն կանանց և տղամարդկանց խմբում են եկեղեցի։ Մի-թէ Աստուծոյ Սեղանից չէ կարելի կենդանի քարոզներով սթափեցնել ժողովուրդին, ցոյց տալ իրական աշխարհը, ասել որ ձեր քայլերն ուղղած են դէպի անդունդ, փաստերով ցոյց տալ, որ ներքաշ չեղած են ոչ միայն Աստուծային, այլ նոյն իսկ մարդկային ուղիղ ճանապարհից։ Հասկացնել իրանց (ծնողներին և ընտանիքներին) նշանակութիւնը, մատնացոյց անել դպրոցի սաների վրա, որ նրանք ուսուցչից 2—3 ժամվայ ընթացքում լսած ու տեսածը մոռանում են ընտանիքի մէջ 16—17 ժամվայ ազդեցութեան տակ։

Իզգիք բամբակը Սուրմալուի կենտրոնին է. նրա ազդեցութիւնը մեծ է չլիակայքի վրա, թող նա իր նախապատուութեան դերը արդարութեամբ կատարէ ի սէր իր և իր չլիակայքի բարեկեցութեան, թող նա հեռու կենայ այն ճանապարհներից, որ տանում են դէպի անբարոյականութիւն։ Թող այժման ծնողները լուրջ հոգացողութիւն անեն իրանց զաւակների վրա և նոցա դէպի իրանց զաւակներն ունեցած լաւ կամ վատ հոգացողութիւնից է կախված մեր նոր սերնդի բարոյական վիճակը...

«Ով ավանջ ունի թող լսէ»։

Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս մենք առիթ ունեցանք ծանօթանալ մի անգլիացի երիտասարդ գիտնականի հետ, որ այժմ հիւր է գտնվում Ռիֆլիսում. նա անգլիական Օկսֆորդի համալսարանի պրոֆէսոր է և նրա անունն է Կոնիբեր (Conybeare)։ Ահա ինչ տեղեկութիւններ է տալիս անգլիացի գիտնականի մասին «Արձագանք» շաբաթաթերթը։ Անգլիացի գիտնականը նպատակ է ընտրած իրան ուսումնասիրել մեր Գաւիթի Անյաղթի փրկութեան յուշերը և նրա ձեռքով կատարված Արիստոտէլի փրկութեան յուշերը թարգմանութիւնը։ Պարոնը կարծում է, որ Արիստոտէլի և միւս փրկութեան ներքին յուշերն ինքուով տպագրված բնագրերից շատ եղծուներն ունեն և թէ այս սխալները ուղղել կարելի է միայն հայոց ոսկէ-դարի հեղինակների թարգմանութիւնների մանրակրկիտ ուսումնասիրութեամբ։ Այս մասնագիտական նպատակին հասնելու համար գիտնականը ուսումնասիրած է հայոց ձեռագիրները Լոնդոնի Բրիտանական մուզեումի մէջ, նմանապէս Փարիզում, Վենիցիայում և Վիեննայում, ապա և Երուսաղէմի հայոց վանքում։ Այժմ նա գալիս է Երուսաղէմից և մի քանի օրից յետոյ ուղևորվելու է Էջմիածին, ուր յոյս ունի իր նպատակին հասնել, ծանօթ լինելով արդէն 1863 թվին Կարինեանի տպած այնտեղի ձեռագիրների ցուցակի հետ։ Պ. Կոնիբեր կարդալով և գրելով հայերէն, խօսում է զուտ գերաբար և այն էլ Գաւիթի Անյաղթի և Խորենացու փրկութեան պատմական գրութեանը լեզուով, իսկ մեր ներկայ աշխարհագրը չէ հասկանում։ Անգլիացի գիտնականն ուղևորված է նրա երկրորդ ամուսինը, որը նոյնպէս ուսանում է մեր լեզուն 1872 թվին Պետերսբուրգի տպած հայերէն լեզուի ձեռնարկով և մեծ ուշադրութեամբ հետևում է իր մարդու լեզուագիտական հետազոտութիւններին։ Պ. Կոնիբերի հետ խօսելու ժամանակ մենք հարցրինք նրան՝ արդե՞ք նա չէ գտնում, որ մեր կլասիկական, գրաբար ասված լեզուն, շատ նման

է իր կազմակերպութեամբ և պարբերութիւններով դասաւորութեամբ հին յունաց լեզուին,—և նա պատասխանեց մեզ, որ ոչ թէ միայն շատ նման է, բայց և կարելի է ամենամեծ վստահութեամբ ասել, որ ոչ մի լեզուով այնքան ճշգրտութեամբ չէ կարելի թարգմանել հին յունաց լեզուի հեղինակութիւնները, որքան հին հայերէն լեզուով։ Էջմիածնում մինչև յունիս ամիսը, ինչպէս նա մեզ ասել է, մնալուց յետոյ, պ. Կոնիբերը դիպարութիւն ունի ուղևորվել վանք վարացի վանքի ձեռագրերին և ուսումնասիրելու համար։

«ՀԱՅԵՐԵՆ» լրագրում կարդում ենք որ Ռիֆլիսի նահանգական դատարանի նախագահ Վ. Սմիտտէն նշանակվում է Ռիֆլիսի դատաստանական պալատի պրօկուրոր (նախկին պրօկուրոր Վ. Անդրէիկի տեղ, որ այժմ սենատոր է նշանակված), իսկ նահանգական դատարանի նախագահ նշանակվում է պալատի պրօկուրորի օգնական Ֆ. Բիկով։ Վերջապէս նահանգական դատարանի պրօկուրորի օգնական Վ. Օրլովսկի նշանակվում է Գանձակի նահանգական դատարանի պրօկուրոր։

Ռուս լրագիրներում կարդում ենք հետևեալը։ «Մի քանի ժամանակ առաջ հարց էր յարուցված Անդրկովկասեան երկաթուղին կառավարութեան ձեռքը անցկացնելու մասին Բանը նրանումն է, որ Ֆինանսների մինիստրութիւնը ձեռք բերեց այդ երկաթուղու 24,000 ակցիաները և դիտարկութիւն ունի դեռ դարձեալ 18,000 ակցիաներ, որոնք «Նոթսբուրի և Պալաչկովսկի» առևտրական տան ձեռքումն են գտնվում։ Այժմ յայտնվում է, որ Ֆինանսների մինիստրութիւնը ընդգէմ է, որ այդ ճանապարհը անցնէ «Թաւառական ժամանակաւոր վարչութեան» ձեռքը։ «НОВ. ОБОЗ.» լրագրի խօսքերով, Ֆինանսական վարչութիւնը, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այն երկաթուղիները, որոնք գտնվում են Թաւառական վարչութեան ղեկավարութեան ներքոյ, իրանց արդիւններով չեն համապատասխանում ոչ կառավարութեան սպասելիքներին, ոչ էլ բարեկարգ մասնաւոր երկաթուղիների գործունէութեան այժմեան աշխուրդներին, ցանկանում է թողնել անդրկովկասեան երկաթուղին իր ներկայ դրութեան մէջ, թողնելով երկաթուղիների դէպարտամենտին հսկողութիւն ունենալու իրաւունքը բացառապէս գործի տեխնիկական կողմի վրա։

Կիրակի, ապրիլի 3-ին, Սուրբ Նշան եկեղեցու օրերոցայ դպրոցի դահլիճում, Սուրբանձանց աւագ քանանայի նախագահութեամբ կայացաւ «Հայունեաց Բարեգործական ընկերութեան» ընդհանուր ժողովը։ Ժողովին ներկայ էին բազմաթիւ կանայք և օրերոցներ։ Վերոյիշեալ ընկերութեան վարչութեան անդամները մէկը մանրամասն ներկայացրեց ընկերութեան անցեալ տարվայ գործունէութիւնը, գովասանական խօսքեր ուղղելով դէպի ընկերութեան քարտուղար և այն երեք անդամներին, որոնք կանոնադրութեան գործութեամբ պէտք է դուրս գնային վարչութիւնից։ Ապա անցնելով վարչութեան ապագայ գործունէութեանը, տիկինը հաղորդեց ընդհանուր ժողովին Հայունեաց Բարեգործական ընկերութեան վարչութեան որոշումը մի արհեստանոց բանաւոր մասին։ Արհեստանոցը պէտք է մտնեն Հայունեաց ընկերութեան ուսումնարանի և հայոց ծխական օրերոցայ ուսումնարանների աշակերտահիւները ձեռագործի մէջ կատարելագործվելու համար։ Աշակերտահիւները պէտք է ամբողջ օրը մնան արհեստանոցում, ուր կը տրվի նրանց ճաշ և երեկոյեան թէյ։ Արհեստանոցում աշխատող աշակերտահիւները պէտք է ստանան արհեստանոցի ընդհանուր եկամուտի մի մասը և այնու վարչութեան այդ առաջարկութիւնը ընդհանուր հաւանութիւն գտաւ և ընդունվեցաւ ընդհանուր ժողովից։ Ապա ընկերութեան քարտուղար պ. Քիշիշեան կարդաց Հայունեաց ընկերութեան անցեալ տարվայ հաշիւը և ներկայ տարվայ նախաշիւթը, որից յետոյ վարչութեան անդամ տիկին Եւստակեան մասնացոյց արաւ ընկերութեան կանոնադրութեան մի քանի թերութիւններ իրա և խնդրեց ժողովի հաւանութիւնը այդ թերութիւնները ուղղելու համար գիտն մարմնաւոր իշխանութեանը։ Տիկինը այդ առաջարկութիւնն ևս միաձայն հաւանութեամբ ընդունվեց։ Ապա օկուպեցաւ քուէարկութիւնը վարչութիւնից դուրս եկող երեք անդամներին տեղ նորերին

ընտրելու համար։ Ժամը 2-ին կէսօրից յետոյ ժողովը փակվեցաւ։

Պէշիքթաշի գերեզմանատան հարցի մասին Կ. ՊՈԼՍԻՑ մի մասնաւոր նամակով մեզ գրում են հետեւեալը. «Յարութիւն պատրիարք Նորից յարուցած է Պէշիքթաշի գերեզմանատան խնդիրն, և արդէն այդ մասին պաշտօնական գրութիւն մը յանձնած է Կրօնական ժողովին, որով կառավարէ յանձնել կառավարութեան գերեզմանատանը։ Պատրիարքը այդ խնդրին առիթով գրած է Էջմիածին, Կաթողիկոսին խնդրելով որ նա իր կողմից հաւանութիւն տայ գերեզմանատանը յանձնելուն և այդ մտքով գիր մը գրէ։ Մակար կաթողիկոս արդէն նամակ մը գրած է Պատրիարքի անունով, որով կառավարէ գերեզմանատանը պարպել և յանձնել տաճկաց։ Մարտի 21-ին պատրիարքը այդ գիրը ներկայացուց եկեղեցականաց, եպիսկոպոսը հրահրված են խորհրդակցելու, ամենուրեք կը տիրէ զարմանք և զայրոյթ, և ոչ ոք գիտէ, թէ ի՞նչ կըլլայ հետեւեալը։ Այդ մի և նոյն հարցի մասին «Արձագանք» շաբաթաթերթի վերջին համարում Պօլսից գրած մի թղթակցութեան մէջ կարդում ենք հետեւեալը. «Արքայապետ պատրիարքը մօտերս եպիսկոպոսական ժողով մը գումարել պիտի տայ կարգաւոր համար Մակար Կաթողիկոսի այն գիրն, որ կը յայտարարէ թէ կարելի է գերեզմանատան ոսկերտեաց փոխադրութիւնը, ապա պատրիարքը ըստ կանխորոշ վճառի պիտի առաջարկէ Պէշիքթաշի գերեզմանատանը յանձնել կառավարութեան։ Մի քանի հոգեւորականներ կամքատանն ու պատրիարքը, թէ նա անցեալ տարի դադարի նամակ մը գրած է Կաթողիկոսին, որպէս զի Ն. Վեհափառութիւն պաշտօնագիր մը յղէ ի Կ. Պօլսի, յայտարարող, թէ հայ եկեղեցին կը թողաւորէ գերեզմանատանց ոսկերտներուն տեղափոխութիւնը։ Այդ հոգեւորականներ կը պահանջեն Յարութիւն պատրիարքէն՝ որպէս զի յերեան հանէ Կաթողիկոսին նախապէս գրած նամակի պատճէնը։»

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը կայանալու է ապրիլի 6-ին, չորեքշաբթի օր, երեկոյեան 7 1/2 ժամին։ Հերթական հարցերը վերջացնելուց յետոյ, ընկերութեան անդամ պ. Էմիլեան պէտք է կարդայ իր դեկլարացիան։ Միջոցառող գործածութեան մասին Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք։

Ներկայ թուականի յուլիսի 1-ից, համաձայն լուսաւորութեան մինիստրութեան կարգաւորութեան, Ռիֆլիսի առաջին գիմնազիայի նախապատասխան դասաւորող վերջնականապէս պէտք է փակվեն Գրա հետ միասին Ռիֆլիսի առաջին գիմնազիայի դիրեկտորը յայտարարում է, որ նախապատասխանների աշակերտները կամ պէտք է հարգանքներով անցնեն առաջին դասարանը, և կամ պէտք է դուրս գնան գիմնազիայից, եթէ անկարող կը լինեն քննութիւն տալ ի նկատի ունենալով, որ պատրաստակաւ են անցնում թուով աշակերտները պէտք է անցնեն առաջին դասարանը, այլ և այն, որ առաջին դասարանը այժմ շատ աշակերտներ կան, որոնց մի նշանաւոր մասը հաւանականաբար երկրորդ տարին կը մնայ դասատան մէջ, գիմնազիայի մասնակալարական խորհուրդը վճռել է հետեւեալը. առաջինից 1888/9 ուսումնական տարվայ համար ոչ մի նոր աշակերտ չընդունել առաջին դասարանում։ Այդ պատճառով այն անձինք, որոնք խնդրեն նույն իրանց որոշ առաջին դասարան ընդունելու մասին, կարող են յետ վերցնել իրանց ներկայացրած դոկումենտները։

Հիւսիսային գործակալութիւնը հեռագրում է մեզ, որ պետական խորհրդին նախագիծ է առարկված վերացնել քաղաքային տուրքը այն ապրանքներից, որոնք բերվում են քաղաքները գետերի միջոցով։ Այդ տուրքը ենթադրված է պահպանել մինչև 1893 թիւը, իսկ այդ տարվանից պակասեցնել նրա չափը, իւրաքանչիւր հինգ տարուց յետոյ, 1/3-ով։

ԳՐՈՒՄԻՑ մեզ գրում են։ «Քաղաքի մայր-եկեղեցու եղիչ քանանայ Տէր-Սահակեանց, իր սովորութեան համեմատ, այս մեծ-պատի կիրակի երեկոյեան Տիրամբար եկեղեցում քարոզներ է խօսում, որոնք առհասարակ, լաւ տպաւորութիւն են

թողնում լսողների վրա։ Անցեալ կիրակի օրը նոյն եկեղեցում քաղաքի քանանայ հայ կալանաւորները հաղորդվեցան։ Այստեղ պէտք է յիշե՛ք, որ բանտում եկեղեցի չունեն։ Տէր-հայրը այս առիթից էլ օգուտ քաղեց մի աղու քարոզ խօսելու։ Նա այն միտքը յայտնեց, որ անբարոյակաւ նստելու և յանցանքներին առաջն առնելու դուրս միջոցներից մէկը՝ մարդկանց որ և է արհեստ սովորեցնելն է. ուստի ցանկալի կը լինէր, աւելացրեց քարոզիչը, որ մեր քաղաքի վարչները աշխատէին երկու սեռի մանուկների համար արհեստաւորաց դպրոցներ հիմնել, որով թէ իրական և թէ արական սեռը կընտելանար աշխատանքին, որ և միջոց կը տար ամբողջ նոր սեւորւթիւն, դպրոցից դուրս գալուց յետոյ, ազնիւ աշխատանքով հայ վաստակելու։ Նալ այն մարդը, որ կարող է ազնիւ աշխատանքով հայ վաստակել, նա միշտ հեռու է մնում անբարոյակաւ նստելուց և յանցանքներից։ Տէր-հայրը աւարտեց իր քարոզը յայտնելով թէ՛ որովհետեւ բանտում կալանաւորները չունեն դրադարան, իրանց միտքը կրօնական և բարոյական գրքերի ընթերցանութեամբ դրադեցնելու, ուստի նա մտադիր է կալանաւորների բանտի մէջ դրադարան բանաւոր համար թողնուլով խնդրել, և այդ նպատակով արդէն գիտն է ուր հարկն է։»

Պետերբուրգի բժիշկները, ասում է «НОВОЕ ВРЕМЯ» լրագիրը, գանգատվում են իրանց կեանքի ծանր պայմանների վրա, և իրանց աշխատանքի սակաւութեան վրա։ Եւ ահա Օղէսայում էլ, «МОСК. ВѢД.» լրագրի թղթակցի խօսքերով, բժիշկների դրութիւնը անտանելի է։ Օղէսայում բժիշկներից շատերը ոչինչ աշխատանք և գործ չունեն, որովհետեւ նախը հաշուով 500 հոգի բնակիչների վրա մի բժիշկ է գալիս, և երկրորդ՝ Օղէսայի բնակիչները հիւանդութեան դէպքում մեծ մասամբ դիմում են կախարհներին և գուշակներին, որոնց ընդունարաններում կը հանդիպէ 40 կամ 60 հոգուց բաղկացած մի բազմութեան, իսկ Օղէսայի դիվանաւոր բժիշկները, չը նայելով որ բաւականանում են վիզիտին 30 կօպէկ վերցնելով, այնու ամենայնիւ անգործ են նստած։ Ինչու, ուրեմն, իրաւացի կերպով հարցնում է վերոյիշեալ լրագիրը, Էսկուլապի այդ ծառայողները անպատճառ մնում են մեծ քաղաքներում։ Նոյն երկոյթը նկատում է և մեր Ռիֆլիսում։ Ճշմարիտ է, որ մեր քաղաքի բժիշկները դեռ ևս չեն հասնել Օղէսայի բժիշկների ողբալի դրութեանը, բայց մեր քաղաքում տարուց տարի աւելացող և դաւառական քաղաքները «չայեղ» չանող բժիշկների թիւը ամենալաւ դրաւական է, որ մեր բժիշկները մօտիկ ապագայում աւելի լաւ դրութիւնը բազմաբնակ պ. Առաքել Կատարեանիցին, յօգուտ յիշեալ աղքատիկ դպրոցի նրա նույն րած 100 բուրլու համար։ Պ. Կատարեանից, բացի սրանից, խօստանում է և ամեն տարի մի մի հարկուր բուրլի նուրբը նոյն դպրոցին։

ԲՈՒՆԱԿՈՒՍ դիւղը հայոց ծխական-եկեղեցական դպրոցի հոգաբարձութիւնը ուղարկել է մեզ մի նամակ, որով յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բազմաբնակ պ. Առաքել Կատարեանիցին, յօգուտ յիշեալ աղքատիկ դպրոցի նրա նույն րած 100 բուրլու համար։ Պ. Կատարեանից, բացի սրանից, խօստանում է և ամեն տարի մի մի հարկուր բուրլի նուրբը նոյն դպրոցին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՒՄԵՆԱՅԻ ԿՈՍՏԱՎՍՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԻՄԱՌԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Հեռագրական տեղեկութիւններից իսկ արդէն հեշտ էր եղբակացնել, թէ ինչպիսի ծանր դրութեան մէջ է գտնվում լուսինական նոր մինիստրութեան կազմակերպութիւնը, և թէ ինչպիսի ընդհարումներ և յուզումներ են տեղի ունեցել

ՊԻՐՈՏ, 1 ապրիլի: Սօֆիայից հաղորդում են, որ միջոցներ են ձեռք առնում Կոստանդնուպոլսի միջոցներ անհի ապահովության համար. գիշերը պահպանանքի թիվը առկայություն են գառառական շատ քաղաքներում զինուորականների մեջ ձեռքադրվածներ են եղել:

ՓԱՐԻՉ, 1 ապրիլի: Մոսկովից հաղորդում են, որ Բուլանովի թեմականությունը, Տուրկուստուր և Արմանտիերում աղմուկների և երգերի միջոցին փորձեցին Բուլանովի հակառակ մի թեմականություն առաջ բերել, բայց չը գտան «Republique Française» լրագրի խոստովանելով, որ Բուլանովի միայնակ կը սկսի դիմադրել պարլամենտին, հըրաւէր է կարգում հանրապետութիւնը պաշտպանելու մասին:

ԲԱՆԳԱԿ, 1 ապրիլի: Այսօր լիտուանի ղեկավարութեան ներքո հիմնված է «Բուսաց ընկերություն», որի նպատակն է դիմադրել առաքողականության խնդրանքներին Սերբիայում:

ՎԻԵՆՆԱ, 1 ապրիլի: Այսօր պետական երկու մասերի պարլամենտներին ներկայացրած զինուորական օրինագիծը որոշում է հետևելը. րէզերվ առաջին տարվայ զինուորները, այլ և պահեստի երկր փոքր հասակին պատկանողները, հանգամանքների պահանջման համաձայն կայսրի հրամանով կարող են կանչվել իսկական ծառայութեան մէջ մտնելու այնքան ժամանակով, որքան այդ անհրաժեշտ կը համարվի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 ապրիլի: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ զինուորական հոգերի անբաժան լինելու հարցը չուտով կը ընկնի պետական խորհրդում և. Ե. Նոբել, նախկին ընկերութեան հիմնադիրը, մարտի 31-ին վախճանվեց կաննուտ, ֆրանսիայում Ս. Պետերբուրգի բորսայ, «Թիֆլիսի» և Գոթթայիսի կալուածական բանկերի գրառական թղթերը—98 ր., Թիֆլիսի քաղաքային կրթիչական ընկերութեան օրինագրի հետ—83 ր.:

ԲԵՐԼԻՆ, 2 ապրիլի: Կանցլերի օրգան «Հիւսիսային գերմանական ընդհանուր լրագիր» հաստատում է, որ կանցլերական ձգնաժամը վերացված է: Կայսրի չնչափողը սեղմվել է, և այդ պատճառով անհրաժեշտ համարվեցաւ փոխել չնչափողի մէջ դրած խողովակը: Կայսրի առողջութեան ընդհանուր դրութիւնը զրանից չը խանգարվեց և երէկ կայսրը կայսրուհու հետ կառքով Բերլին հիաց: Այն լուրը, թէ ռուսաց ֆինանսների մինիստրութիւնը մերժել է ֆարիզից եկած առաջարկութիւնները՝ փոխառութեան վերաբերութեամբ, այստեղի բորսային շրջաններում ընդունվում է իբրև ապացոյց, որ ծախսերի ծածկելը և ընթացիկ մուտքերի ստացվելը Ռուսաստանում ամուր կերպով ապահովված է, և այդ պատճառով Ռուսաստանի ֆինանսական դրութիւնը այստեղ համարվում է շատ միջիթարական, իսկ ապագայի վերաբերմամբ աւելի բարեկալութիւն են սպասում: քաղաքական յարաբերութիւնների մէջ նըկատվող բարեփոխութիւնների աղբեցութեան տակ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 ապրիլի: Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ «Саратовский Листок» լրագրի հրատարակութիւնը մի ամսով դադարեցրած է: Նրէկ վախճանվեց յայտնի ճանապարհորդ Միկուլա-Մակայ ջրգող հրանդութիւնից:

ՓԱՐԻՉ, 3 ապրիլի: Պրինց Վիկտոր Նապոլեոն դիմեց ֆրանսիական ազգին մի շրջաբերականով: Բուլանովի կուսակիցները պատրաստում են մի պրոկլամացիա, որ կը տարածվի 300,000 օրինակի քանակութեամբ:

ԲՈՒԴԱՐԵՍ, 3 ապրիլի: Բուլանովի զեղական ազգաբնակչութեան մէջ նկատվող յուզմունքները, ինչպէս երևում է, շատ մեծ կերպարանք են ըստացել: Բուլանովի հետ ընկած շատ ձեռքադրվածներ: Ենթադրութիւն կայ ապստամբող գիւղացիների դէմ խիստ միջոցներ ձեռք առնելու:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 ապրիլի: Մշակված են կանոններ՝ ռուսաց հպատակութիւնից դուրս դալու համար:

ԲՈՒԴԱՐԵՍ, 3 ապրիլի: Պատգամաւորների ժողովը փակված է և շուտով կարճակվի: Նոր ընտրութիւններ տեղի կունենան մայիսին:

ԼԻՎ, 4 ապրիլի: Հիւսիսային ղեկավարման պատգամաւորի ընտրութիւնների ժամանակ, գերեայ Բուլանովէ ստացաւ 172,500 ձայն ընդդէմ պատենականների կանդիդատ Ֆուկարի, որը միայն 76,000 ձայն ստացաւ: Բոլոր ընտրողների թիւը 267,530 է:

ՓԱՐԻՉ, 4 ապրիլի: Մոսկովից փողոցի վրա գտնվող այն տների առաջ, ուր գտնվում են Բուլանովի համակրող լրագիրների խմբագրութիւնները, երեկոյան հաւաքվեցաւ ժողովրդի մեծ բազմութիւն: Այդ ամբողջ սկսեց հայհոյանքներ արձակել այն տրանսպարանտի առաջ, որի վրա նկարված էր Ժիւլ Ֆերրի, կլոնին հաղուստով, մի անիւ ձեռքին բռնած, և ողորկած կերպով ողջունում էր միւս տրանսպարանտը, որի վրա նկարված էր գեներալ Բուլանովէ նշանադրեալով: Սակայն ծանր անկարգութիւններ պատահած չեն և ֆարիզի միւս մասերում ամեն բան հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ	
Ապրիլի 1-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	120 ր. 25 >
Համբուրգի վրա 100 մարկ —	59 > 30 >
Փարիզի վրա 100 ֆրանկ —	47 > 30 >
Ոսկի — արծէ —	9 > 53 >
Մաքսային կուպոններ —	190 > 50 >
Արծաթ —	1 > 40 >
Բորսային դիվիդենդներ —	61/4 և 71/4 % >
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99 > 62 >
— — — — — 2-րդ —	98 > 50 >
— — — — — 3-րդ —	98 > — >
— — — — — 4-րդ —	98 > — >
— — — — — 5-րդ —	98 > 50 >
— — — — — 6-րդ —	— > — >
Նոր 4% փոխառութիւն	83 > 37 >
Արևելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ.	99 > 12 >
— — — — — 2-րդ —	98 > 62 >
— — — — — 3-րդ —	98 > 50 >
Ներքին 5% առաջին փոխառութիւն.	269 > 50 >
— — — — — երկրորդ —	245 > 50 >
51/2% ռէնտա	102 > 25 >
Ոսկեայ թէնտա	199 > 50 >
Եթեթրոք կոնսոլիդաց. փոխառութիւն.	171 > 75 >
Նոր երկաթուղային ռէնտա	98 > 37 >
5% գրառական թղթեր կալուած.	— > — >
— — — — — փոխ. կրեդ. ընկ.	170 > — >
— — — — — Գրառ. թղ. Արշ. բանկի	97 > 87 >
51/2% գրառական թղթեր խերսոնի կալուած. բանկի.	99 > 50 >
6% գրառակ. թղ. խարկովի կալ. բան.	101 > — >
— — — — — Պոլտավայի —	101 > — >
— — — — — Պետ. Տուրկուս. —	101 > — >
— — — — — Կիեւի —	101 > 25 >
— — — — — Մոսկովայի —	102 > — >
— — — — — Բեսարաբ. Տուրկուս. —	100 > 50 >
— — — — — Նիթ. Սամար. —	101 > — >
— — — — — Վիլնայի —	101 > 25 >
— — — — — Թիֆլիսի—27 և 43 տ. —	— > — >
— — — — — Բուլանովի—18 և 43 տ. —	— > — >
Վ. օլժոկո-կամուկի բանկի ակցիաները	740 > — >
Բուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	273 > — >
Իրիսկով-Վ. օլժոկով ընկ.	90 > 50 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրին. գացիաներ.	95 > 50 >
Մոսկովայի քաղաք. օրին. գացիաներ.	94 > 75 >
Օղէսայի —	94 > 37 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրին.	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի տրանսպարանտիւնը ամուր է:	
Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ	

Ծ Ա Խ Վ Ո Ւ Մ Է

ԲՈՐԺՈՄՈՒՄ, միներալիան ջրերի մօտ, յարմար կերպով կահաւորված ամառանոց, որ պատկանում է Նիկոլայ Եգորովիչ ԶՈՒԲԱՆՈՎԻՆ, և որ ունի ամեն տեսակ տնային տնտեսութեան պատկանող շինութիւններ, սառցատուն և փղերիկ պարտէզ: Ամառանոցը նայելու և նրա հին մասին տեղեկանալու համար դիմել Զուբովի կառավարչին, պ. Կեղզովին, «Российское Общество транспорта» ընկերութեան գրասենեակում:

1—3 (Ե. շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, ապրիլի 13-ին, ԳԱՆԼԻԱ (GAULE) շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթոնից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթոնում Լէմուշլուի տան, Նաբերէֆայա, Է. Թիֆլիսում՝ Նախկին Արժուրի գալլերէում, № 103.

1—2

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Ուրբաթ, 8/20 ապրիլի ԲԱՌՈՒՄԻՅ զուրս կը գնայ շոգենաւ LE PEI-HO (ԼԸ ՊԵՅ-ՀՈ) նաւապետ CAMOIN (ԿԱՄՈԻՆ) մանկով Կ. Պոլիս, Զիւռնիա և Սիւրա: Ազնաները՝ ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍԵՒԵԺԷՐ, իսկ Թիֆլիսում ԳԻՒԳՈՐ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ:

2—3

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄԻԳՈՒՆԻ ԵՒ ԳԱԶՈՒՆ ԶՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱՌՈՒՄՈՒՄ

(Ցէրկովնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գտնվում է Լօբկօ և ընկ. տպարանը):

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ: Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՑԻ մի ՊՐՈՎԻԶՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեռք մեքենաներ, նոյնպէս և ՁԻՎԻՆԻ հուշակաւոր ՖԻՆՏՐԸ, որը միակ է, որ աշոգութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և զերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Ծնորով այն օժանդակ միջոցներ, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիշդում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէլոէրեան, մրգային և գազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲՈՅՈՒԿԱՆ ԶՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վիլի, Էմի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների առած կանոններին: Արուստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հուշակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել ընական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թաքտ գրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ամօթաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախտերի դաւնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կաղմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործն ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածաշրջաններից խուսափելու համար, խնայարարաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողերին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշան և կը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 14—50 (Ե)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒՆԻՒՆՈՑ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆՑԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամ օր

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 Ժ. ներքին, երկայոց և կանանց ց.

ԿԻՆ—ԲԺԻԶԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 Ժ. կանանց և երեխայոց ց.

ԲԷՆԿԼԻՎՍԿԻ—11—12 Ժ. աղանջների, կոկորդի, սիֆիլիսի և ստամոքիների ց.

ՍՕՐՈԲԷՎ—11—12 Ժ. ստամոքիների ց.

Ա. ԳՈՐԿՈ—12—1 Ժ. աչքի, ներքին և մանկական ց.

ԱՐՏԵՄԻՆՎ—12—1 Ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.

ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 Ժ. ներքին և երեխայոց ց. ամեն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

ԶԱԿԵՎՍԿԻ—5—7 Ժ. ջրային ց. և էլէկտրօ-տեղապահ.

ՓՈՒՎԻՆԵԱՆ—6—7 Ժ. ներքին և երեխայոց ց.

Հիւանդանոցում է մահ կարգաւ ՏԻ ՄՕԳԵՐ:

ՎՃԱՐ—50 Կ.: Համախորհրդի (Կոնսիլիումի) համար համաձայնութեամբ: Մշտական անկողիններ.

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՈՎՍԿԻ